



<Յունիբանկ> ԲԲԸ 2023թ. գործունեության վերաբերյալ Վարչության ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Ուրախ ենք տեսնել ձեզ այսօր Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին՝ 2023 թվականի աշխատանքի արդյունքներով:

Թույլ տվեք ներկայացնել Բանկի նախորդ տարվա գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

2023թ. Յունիբանկը շարունակել է իր դինամիկ գործունեությունը՝ արձանագրելով կայուն ֆինանսական ցուցանիշներ: Նորարարական լուծումների ներդրումը, բիզնես-գործընթացների օպտիմալացման համալիր մոտեցման կիրառումը թույլ են տվել Յունիբանկին բարձրացնել իր գործառնական արդյունավետությունը, դառնալ ավելի հաճախորդակենտրոն և իր դրական ներդրումը ունենալ Հայաստանի տնտեսության մեջ: Հիմնական շեշտը դրվել էր ռիսկերի առավել արդյունավետ նույնականացման, գնահատման և կառավարման համար մեթոդաբանության մշակման, կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրման, ներդրումային կլիմայի բարելավման և ծառայությունների բարձր որակի ապահովման վրա:

Հիմնական իրադարձությունները

- ✓ Միջազգային ներդրողներից կապիտալի ներգրավման ուղղությամբ հերթական քայլը անելով՝ Յունիբանկն իրականացրել է հասարակ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և համալրել է կանոնադրական կապիտալը 2.5 մլրդ դրամով՝ ավելացնելով մինորիտար բաժնետերերի մասնաբաժինը:
Հանդիսանալով արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից մեկը՝ Բանկը 2023թ. իրականացրել է պարտատոմսերի թողարկում և հաջողությամբ տեղաբաշխել է 2 մլրդ դրամ և 5 մլն դոլար:
- ✓ Բանկում կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման նոր փուլ է դարձել անկախ արտաքին խորհրդատու՝ KPMG միջազգային ընկերության առաջարկությունների իրագործումը՝ Խորհրդի անկախության ուժեղացման, Խորհրդի կազմում անհատական լիազորությունների և իրավասությունների ռացիոնալ բաշխման, Խորհրդի ձևավորման քաղաքականության և Խորհրդի անդամների աշխատանքի գնահատման մեթոդաբանության կառուցման ուղղությամբ:
- ✓ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մեր հաճախորդների իրական կարիքները բավարարելու համար Յունիբանկը գործածության մեջ է դրել նոր ծառայություն՝ Visa Direct, որը թույլ է տալիս հաճախորդներին իրենց Visa կամ

Mastercard վճարային համակարգերի քարտերից փոխանցել դրամական միջոցներ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված Visa քարտերին, գործարկել է Google Pay արագ անհալում վճարումների ծառայությունը, թարմացրել և ընդլայնել է ֆիզիկական անձանց համար բջջային հավելվածի ֆունկցիոնալությունը և նախաձեռնել է կորպորատիվ հաճախորդների համար հավելվածի մշակումը, սկսել է աշխատանքներ UBPAY դրամական փոխանցումների հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման ուղղությամբ:

- ✓ Շարունակվել են աշխատանքներ թղթակցային ցանցի ընդլայնման ուղղությամբ միջազգային առևտրի աջակցության և միջսահմանային վճարումների արդյունավետության բարձրացման համար: Հարաբերություններ են հաստատվել Միջին Ասիայի, Կենտրոնական Ասիայի, արաբական և եվրոպական երկրների մի շարք առաջատար բանկերի հետ: Միջազգային թղթակցային հարաբերությունները և փոխանցումները, Բանկի ներքին գործընթացներին համապատասխան, մանրակրկիտ ստուգվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հավանական ռիսկերի տեսանկյունից: Հարկ է նշել, որ ըստ Բանկին ներկայացված հաշվետվության, KPMG աուդիտորական ընկերության կողմից չի հայտնաբերվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում Եվրոպական միության ստանդարտների և Հայաստանի նորմատիվ պահանջների անհամապատասխանություն:
- ✓ Մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում Բանկը դադարեցրել է Գավառ, Արին Բերդ և Նորագավիթ մասնաճյուղերի գործունեությունը՝ ակտիվները և պարտավորությունները փոխանցելով համապատասխանաբար մոտակա մասնաճյուղերին, բացել է Մխչյան մասնաճյուղը, նախաձեռնել է աշխատանքներ Դավա նոր մասնաճյուղ բացելու ուղղությամբ, բարեկարգել է գործող Աջափնյակ, Աշտարակ մասնաճյուղերի տարածքները:
- ✓ Յունիբանկը հաջողությամբ անցավ տեղեկատվական անվտանգության և հաճախորդների անձնական տվյալների պաշտպանության ստանդարտներին համապատասխանության վերահավաստագրման աուդիտ:
- ✓ Սոցիալական պատասխանատվության իր առաքելության շրջանակներում Յունիբանկը միացել է կենսաթոշակառուներին և նպաստառուներին բանկային քարտով անկանխիկ եղանակով վճարում կատարելու դեպքում հետվճարի ծրագրին: Շարունակելով ակտիվ աջակցել կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներին՝ Բանկն ընդլայնել է համագործակցությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ, դարձել է Մատենա առաջնորդության և մասնագիտական զարգացման միջազգային բիզնես-դպրոցի գործընկերը, դարձել է Unisport նոր սպորտային ակումբի և Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի գլխավոր հովանավորը, ավանդաբար հանդես է եկել որպես «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղի հովանավոր: Յունիբանկի աջակցությամբ Երևանում անցկացվել է FINTECH360 միջազգային համաժողովը:
- ✓ Յունիբանկը դարձել է Ֆրանսիա - Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի անդամ, ինչը հնարավորություն է տալիս Բանկին իրականացնել նոր

նախագծեր՝ ընդլայնելով հարաբերությունները ֆրանսահայ գործարար համայնքի և Հայաստանում ֆրանսիական ընկերությունների հետ:

- ✓ Moody's Investors Service միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկային վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ:

Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին

Համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, Բանկն ամփոփել է 2023 թվականը հետևյալ ցուցանիշներով՝

- **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 289 մլրդ դրամ:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** ավելացել են 25%-ով՝ հասնելով 149 մլրդ դրամի և կազմելով ընդհանուր ակտիվների գրեթե 52%-ը: Արդյունքում **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** գերազանցել են 15.8 մլրդ դրամը և 2022թ-ի համեմատ աճել են գրեթե 60%-ով, ինչը զուտ տոկոսային մարժայի պատմական առավելագույն՝ տարեկան 6.1%, ցուցանիշի հասնելու արդյունք է:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** կազմել են 248 մլրդ դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները կազմել են 211 մլրդ դրամ: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 9.3 մլրդ դրամ:
- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 40.6 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 16.77%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%):
- 2023 թվականը դարձավ նշանակալի առաջընթացի տարի, որի արդյունքում Յունիբանկը ամփոփել է տարին 4,454 մլն դրամի չափով **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹՈՎ**: Կատարվել է լայնածավալ աշխատանք ժամկետանց վարկերի հետքերումների ուղղությամբ, արձանագրվել է մոտ 8.1 մլրդ դրամի չափով փաստացի հետվերադարձ: 2023 թվականի ընթացքում բռնագանձվել և Բանկին ի սեփականություն է գրանցվել 16 միավոր անշարժ գույք՝ մոտ 1.1 մլրդ դրամ ընդհանուր հաշվեկշռային գումարի, վաճառվել է 42 միավոր անշարժ գույք՝ մոտ 760 մլն դրամ ընդհանուր գումարի:

Կորպորատիվ բիզնես

2023թ-ին Յունիբանկը ամրապնդել է իր դիրքը կորպորատիվ վարկավորման շուկայում՝ կենտրոնանալով տնտեսության հիմնական հատվածներում միկրո, փոքր և միջին բիզնեսներին աջակցելու վրա: Վարկավորման գործքիքակազմի թարմացումը, հասանելի և ճկուն առաջարկների ներդրումը, համալիր ծառայությունների մատուցումը բերել է ինչպես վաճառքների աճին և վարկային պորտֆելի ավելացմանը, այնպես էլ ձեռնարկատերերի հետ վստահելի հարաբերությունների հաստատմանը: Միկրովարկերի հաստատման գործընթացի զուգահեռ ավտոմացումը դարձրեց ֆինանսավորումը առավելագույնս պարզ և արագ:

Հայաստանի Էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցության ընդլայնման շնորհիվ Յունիբանկն ապահովել է հասանելիություն լիզինգային գործիքների և

ծառայությունների առավել լայն շրջանակին՝ դրանով իսկ խթանելով երկրի տնտեսական աճը:

Հետևելով էկոլոգիական պատասխանատվության սկզբունքներին՝ Բանկն ակտիվ մասնակցել է Հայաստանում կանաչ ֆինանսավորման զարգացմանը, ֆինանսավորել է վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության բարձրացման, թափոնները նվազեցնելու համար արտադրության արդիականացման ոլորտի ծրագրերը, դարձել է ագրովարկավորման ծրագրի մասնակից՝ ագրոարդյունաբերական ոլորտի կարիքների համար մշակված հատուկ գործիքով:

Բանկը շարունակում է նաև տրամադրել ֆինանսավորում գերմանա-հայկական ֆոնդի կողմից աջակցվող ծրագրերին՝ փոքր, միջին և միկրո բիզնեսի ոլորտում:

2023թ. արդյունքներով, կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է մոտ 42 մլրդ դրամ, պորտֆելը դիվերսիֆիկացված է Բանկի վարկավորման քաղաքականությամբ սահմանված նիշային հատվածներով:

Կորպորատիվ հաճախորդների քանակը հասել է 4000-ի՝ հիմնականում փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների հաշվին:

Մանրածախ բիզնես

Բանկի գործունեության զգալի ծավալը կենտրոնացված է մանրածախ հատվածում, և աճի առանցքային գործոններից մեկը ակտիվությունն էր անշարժ գույքի շուկայում: 2023թ. մանրածախ վարկերի պորտֆելը աճել է 30%-ով և կազմել է 108 մլրդ դրամ:

Վարկային պորտֆելի աճի գործում առանձնահատուկ դեր է խաղացել հիփոթեքային վարկավորումը՝ ի շնորհիվ հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակի և Հայաստանի առաջատար կառուցապատող ընկերությունների հետ համագործակցության: 2022թ. համեմատ Բանկում հիփոթեքային վարկավորման ծավալը եռապատկվել է:

Յունիբանկն ակտիվ մասնակցել է Արցախի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրին: Այդ ծրագրի շրջանակներում ավելի քան 450 ընտանիքներին տրամադրվել են 5 մլրդ դրամի գումարի չափով հիփոթեքային վարկեր:

Հաճախորդների փոփոխվող պահանջներին համապատասխանելու համար, Բանկը շարունակաբար զարգացրել է գործընկերային հարաբերությունները, ներդրումներ է կատարել մանրածախ գործիքների և ծառայությունների զարգացման, գործընթացների ավտոմատացման, հաճախորդների սպասարկման ժամանակի կրճատման և որակի բարելավման համար առցանց հարթակների կատարելագործման մեջ:

2023թ. առաջին եռամսյակի արդյունքներով, Յունիբանկը վարկերի քանակով դարձել է Հայաստանի շուկայի առաջատարը:

Ֆիզիկական անձ հաճախորդների քանակը հասել է 350.000-ի:

Կորպորատիվ կառավարում

2023թ. Բանկը զգալի աշխատանք է կատարել կորպորատիվ կառավարման ոլորտում՝ Խորհրդի և Վարչության կազմում ներգրավել է Բանկի գործունեության տարբեր առանցքային ոլորտներում մեծ փորձառությամբ նոր անդամների, թարմացրել է մշտական հանձնաժողովների կազմը, բարձրացրել է վերահսկողության և հաշվետվողականության համակարգի թափանցիկությունը: Գիտակցելով, որ կորպորատիվ կառավարման կատարելագործումը անընդհատապես գործընթաց է, Յունիբանկը մշտապես ուսումնասիրում է միջազգային ստանդարտները և առաջատար փորձը՝ լավագույն մոտեցումներն իր գործունեությանը ադապտացնելու և ի շահ Բանկի ու նրա բաժնետերերի կշռադատված որոշումներ կայացնելու համար:

Կառավարման մարմինների գործունեությանը աջակցելու համար լիարժեք գործել են հետևյալ հանձնաժողովները՝ **Խորհրդին կից՝** Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով, **Վարչությանը կից՝** Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով, Տեղեկատվային հանձնաժողով, Վարկային սքրինինգի հանձնաժողովը: Ակտիվորեն գործել են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովն ու ենթահանձնաժողովները, Վարկային կոմիտեն:

Կադրային քաղաքականություն

Կադրային քաղաքականության արդիական ուղղությունն ու խնդիրը անձնակազմի արտահոսքի կրճատումն ու որակավորված մասնագետների որոնումն էր, ինչը աշխատաշուկայում բարձր մրցակցության պայմաններում Յունիբանկին հաջողվեց իրականացնել: Գրավիչ աշխատանքային պայմանների, մրցունակ կորպորատիվ փաթեթների ստեղծումը, աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի իրականացումը նպաստել են Բանկի զարգացմանը և հաջողությանը:

Իրականացվել է Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի օպտիմալացում, կատարվել է մայրաքաղաքի մասնաճյուղային ցանցի դասակարգում ըստ մասնագիտացված ստորաբաժանումների՝ մանրաձախ և կորպորատիվ ուղղվածությամբ: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 913 աշխատակից:

Համապատասխանություն ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին

Բանկում գործող Համապատասխանության տնօրինության հիմնական նպատակն է աջակցել ղեկավարությանը ապահովելու Բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին: Այդ նպատակով ամենօրյա ռեժիմով իրականացվում է գործող օրենսդրական ակտերի վերլուծություն, կատարվում է նորմատիվ իրավական կարգավորման և Բանկի ներքին իրավական ակտերում փոփոխությունների կատարման նկատմամբ հետևողական

հսկողություն, իրականացվում է մասնաճյուղերի աշխատանքի մոնիթորինգ ինչպես տեսահսկման, այնպես էլ արտագնա ստուգումների միջոցով:

Համապատասխանության տնօրինության ուշադրության կենտրոնում է նաև աշխատակիցների համար թեմատիկ սեմինարների կազմակերպումը (օրենսդրական փոփոխությունների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հարցերի, FATCA-ի պահանջներին համապատասխանության ապահովման վերաբերյալ և այլն):

2024 թվականի ռազմավարական առաջնահերթությունները

Երախտապարտ ենք ձեզանից ձեռք բերված առաջընթացի համար և վճռական ենք հաղթահարելու առաջադրված խնդիրները և հասնելու նախատեսված արդյունքներին: Այս տարի Բանկը կենտրոնանալու է հետևյալ ռազմավարական առաջնահերթությունների վրա՝ սահմանելով հստակ նպատակներ՝

- ✓ շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում և հաճախորդների բազայի աճ՝ հաճախորդակենտրոն մոտեցման զարգացման, վաճառքների ներթափանցման, ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման և հարմարավետ թվային հարթակների ապահովման միջոցով,
- ✓ եկամտի նոր աղբյուրների մշակում՝ տրանզակցիոն բիզնեսի գործիքակազմի ընդլայնում, բրոքերային բիզնեսի՝ նոր շուկաներ ներթափանցում և այլն,
- ✓ մասնակցություն շրջակա միջավայրի պահպանության գլոբալ առաքելությանը, բնապահպանական նախագծերի և նախաձեռնությունների ֆինանսավորում, կանաչ պարտատոմսերի թողարկում, ESG-ի բոլոր երեք ուղղությունների համակարգված զարգացում՝ էկոլոգիա, սոցիալական քաղաքականություն և կորպորատիվ կառավարում:

Որդեգրված ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև խնդիր է դրել 2024 թվականին հասնել 11.8 մլրդ դրամ զուտ շահույթի ցուցանիշին՝ կրկնապատկելով նախորդ տարվա ֆինանսական արդյունքը:

Եզրափակելով մեր հանդիպումը՝ Բանկի Վարչության անունից շնորհակալություն եմ հայտնում մեր բաժնետերերին՝ իրենց աջակցության և վստահության համար, մեր հաճախորդներին և մեզ հետ համագործակցողներին՝ Յունիբանկին որպես հուսալի ֆինանսական գործընկեր ընտրելու համար, անձնակազմին՝ պրոֆեսիոնալիզմի և ջանասեր աշխատանքի համար:

Համոզված եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ Յունիբանկը կշարունակի իր վստահ ուղին դեպի նոր բարձունքներ և հաջողություններ:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ
19.04.2024թ



ГОДОВОЙ ОТЧЕТ Правления о деятельности ОАО «ЮНИБАНК» за 2023г.

Уважаемые акционеры, партнеры, дамы и господа!

Мы рады видеть всех Вас сегодня на Годовом общем собрании акционеров открытого акционерного общества Юнибанк по итогам работы за 2023 год.

Разрешите представить краткий отчет о результатах деятельности Банка за прошлый год.

В 2023 году Юнибанк продолжил свою динамичную деятельность, демонстрируя устойчивые финансовые показатели. Внедрение инновационных решений, применение комплексного подхода к оптимизации бизнес-процессов позволили Юнибанку повысить свою операционную эффективность, стать более клиентоориентированным и внести свой положительный вклад в экономику Армении.

Основной акцент был поставлен на разработку методологии для более эффективной идентификации, оценки и управления рисками, на внедрение лучших практик корпоративного управления, улучшение инвестиционного климата и обеспечение высокого качества услуг.

Ключевые события

- ✓ Проложив очередной шаг на привлечение капитала от международных инвесторов, Юнибанк осуществил дополнительный выпуск обыкновенных акций и пополнил уставной капитал на 2.5 млрд драм с увеличением доли участия миноритарных акционеров. Являясь одним из активных участников рынка ценных бумаг, Банк в 2023 году осуществил эмиссию облигаций и успешно разместил 2 млрд драм и 5 млн долларов.
- ✓ Новым этапом совершенствования системы корпоративного управления в Банке стала реализация рекомендаций независимого внешнего консультанта - международной компании KPMG, по усилению независимости Совета, проведению рационального распределения индивидуальных полномочий и компетенций внутри Совета, построению политики формирования Совета и методологии оценки работы членов Совета.
- ✓ Для удовлетворения реальных потребностей наших клиентов в сфере новейших информационных технологий Юнибанк задействовал новую услугу — Visa Direct, позволяющую клиентам отправлять деньги со своих карт Visa или Mastercard на карты Visa, выпущенные иностранными банками, запустил сервис быстрых бесконтактных платежей Google Pay, обновил и расширил функциональность мобильного приложения для физических лиц и приступил к разработке приложения для корпоративных клиентов, инициировал работы по созданию и осуществлению деятельности армянской платежной системы денежных переводов UBPAY.
- ✓ Продолжена работа по диверсификации корреспондентской сети для поддержки международной торговли и повышения эффективности трансграничных платежей. Налажены отношения с рядом передовых банков Средней Азии, Центральной Азии, арабских и европейских стран. Международные корреспондентские отношения и переводы, в соответствии с внутренними процедурами Банка, тщательно проверяются на предмет потенциальных рисков ОД/ФТ. Следует отметить, что, согласно предоставленному Банку отчету, аудиторская компания KPMG не обнаружила каких-либо несоответствий стандартам ЕС и нормативным требованиям РА в сфере противодействия ОД/ФТ.
- ✓ В рамках политики оптимизации филиальной сети Банк прекратил деятельность филиалов Гавар, Арин Берд и Норагавит с переводом активов и обязательств соответственно в близлежащие филиалы, открыл филиал Мхчян, инициировал работы по открытию нового филиала Далма, благоустроил помещения действующих филиалов Аджапняк, Аштарак.
- ✓ Юнибанк успешно прошел ресертификационный аудит на соответствие стандартам по информационной безопасности и защите персональных данных клиентов.
- ✓ В рамках своей миссии по социальной ответственности Юнибанк присоединился к программе выплаты кэшбека пенсионерам и получателям пособий при оплате банковской картой безналичным способом. Продолжая активно поддерживать образовательные,

культурные и спортивные мероприятия, Банк расширил сотрудничество с Национальным политехническим университетом Армении, стал партнером международной бизнес-школы лидерства и профессионального развития «Матена», выступил главным спонсором нового спортивного клуба «Unisport» и Федерации борьбы Армении, традиционно выступал спонсором телевизионной игры «Что? Где? Когда?». При поддержке Юнибанка в Ереване прошла международная конференция Fintech360.

- ✓ Юнибанк стал членом Торгово-промышленной палаты Франция - Армения, что позволяет Банку реализовать новые проекты, расширяя связи с французско-армянским бизнес-сообществом и французскими компаниями в Армении.
- ✓ Международное рейтинговое агентство Moody's Investors Service утвердило рейтинг кредитоспособности Юнибанка на уровне B2 с прогнозом стабильный.

Обзор финансовых результатов

Согласно Международным Стандартам Финансовой Отчетности, Банк обобщил 2023 год со следующими показателями:

- **АКТИВЫ** составили 289 млрд драм.
- **КРЕДИТНЫЕ ВЛОЖЕНИЯ** увеличились на 25% и достигли 149 млрд драм, составив почти 52% общих активов. В результате, **ЧИСТЫЕ ПРОЦЕНТНЫЕ ДОХОДЫ** превысили 15.8 млрд драм и по сравнению с 2022г. выросли почти на 60%, что явилось следствием увеличения чистой процентной маржи до исторически пикового значения в 6.1% годовых.
- **ОБЯЗАТЕЛЬСТВА** составили 248 млрд драм. Обязательства перед клиентами составили 211 млрд драм. Портфель выпущенных облигаций составил 9.3 млрд драм.
- **ОБЩИЙ КАПИТАЛ** составил 40.6 млрд драм. На конец года коэффициент достаточности капитала составил 16.77%, что превышает минимальный уровень, установленный центральным банком РА (11%).
- 2023-ий стал годом значительного прогресса, в результате чего Юнибанк завершил год с **ЧИСТОЙ ПРИБЫЛЬЮ** в размере 4,454 млн драм. Проведена масштабная работа по возврату просроченных кредитов, зафиксирован фактический возврат на сумму около 8.1 млрд драм. В течение 2023г. было взыскано и оформлено в собственность Банка 16 единиц недвижимости на общую балансовую сумму около 1.1 млрд драм, реализовано 42 единицы недвижимости на общую сумму около 760 млн драм.

Корпоративный бизнес

В 2023 году Юнибанк укрепил позиции на рынке корпоративного кредитования, сосредоточившись на поддержке микро, малого и среднего бизнеса в ключевых сегментах экономики. Обновление линейки кредитных продуктов, внедрение доступных и гибких предложений, предоставление комплексных услуг привело как к росту темпа продаж и увеличению кредитного портфеля, так и выстраиванию доверительных отношений с предпринимателями. Параллельная автоматизация процесса утверждения микрозаймов сделала получение финансирования максимально простым и быстрым.

Благодаря расширению сотрудничества с министерством экономики Армении Юнибанк обеспечил доступ к более широкому спектру лизинговых продуктов и услуг, тем самым стимулируя экономический рост страны.

Следуя принципам экологической ответственности, Банк активно участвовал в развитии зеленого финансирования в Армении, финансировал проекты в области возобновляемой энергии и повышения энергоэффективности, модернизации производства для сокращения отходов, стал участником программы агрокредитования с продуктом, специально адаптированным под нужды агропромышленного сектора.

Банк также продолжает предоставлять финансирование проектам, поддерживаемым Немецко-армянским фондом в сфере малого, среднего и микро бизнеса.

По итогам 2023г., объем корпоративных кредитов в совокупном кредитном портфеле Банка составил около 42 млрд драм, портфель диверсифицирован в нишевых сегментах, обозначенных кредитной политикой Банка.

Количество корпоративных клиентов достигло 4.000 в основном за счет предприятий малого и среднего бизнеса.

Розничный бизнес

Значительный объем бизнеса Банка сосредоточен в розничном сегменте, и одним из ключевых факторов роста стала активность на рынке недвижимости. В 2023 году портфель розничных кредитов Банка вырос на 30% и составил 108 млрд драм.

В росте кредитного портфеля ключевую роль сыграло ипотечное кредитование благодаря широкому спектру ипотечных программ и сотрудничеству с ведущими строительными компаниями в Армении. По сравнению с 2022 годом объем ипотечного кредитования в Банке продемонстрировал трехкратный рост.

Юнибанк активно участвовал в программе господдержки по обеспечению жилищной доступности для семей, насильственно перемещенных из отдельных районов Арцаха. В рамках этой программы свыше 450 семьям предоставлены ипотечные кредиты на сумму 5 млрд драм.

Чтобы соответствовать меняющимся потребностям клиентов, Банк постоянно развивал партнерские взаимоотношения, инвестировал в развитие розничных продуктов и услуг, в автоматизацию процессов, совершенствование онлайн-платформ для сокращения времени и повышения качества обслуживания клиентов.

По итогам первого квартала 2023 года, Юнибанк стал лидером рынка Армении по количеству кредитов.

Количество розничных клиентов банка достигло 350.000.

Корпоративное управление

В 2023 году Банк провел значительную работу в области корпоративного управления: привлек в состав Совета и Правления новых членов с обширным опытом и экспертизой в различных ключевых аспектах деятельности Банка, обновил состав постоянных Комитетов, повысил прозрачность системы контроля и подотчетности. Сознывая, что совершенствование корпоративного управления является непрерывным процессом, Юнибанк неустанно изучает международные стандарты и передовые практики для адаптации лучших подходов к своей деятельности, принятия взвешенных решений в интересах Банка и его акционеров.

Для содействия в деятельности органов управления полноценно функционировали следующие комитеты: **при Совете** - Комитет по аудиту и управлению рисками, Инвестиционный комитет, Комитет по кадрам и вознаграждениям, **при Правлении** - Комитет по управлению активами и пассивами и по тарифам, Комитет по оценке персонала, Комитет по информационным технологиям и информационной безопасности, Комитет по инвентаризации, закупкам и отчуждению, Тендерный комитет, Комитет по кредитному скорингу.

Активно действуют также Комитет и подкомиссии по управлению резервами, Кредитный комитет.

Кадровая политика

Актуальным направлением и задачей кадровой политики было сокращение текучести кадров и поиск квалифицированных специалистов, что в условиях высокой конкуренции на рынке труда Юнибанку удалось реализовать. Создание привлекательных условий труда, конкурентоспособных компенсационных пакетов, реализация программ обучения и повышения квалификации персонала способствовало росту и успеху Банка.

Реализована оптимизация организационной структуры Банка, проведено разделение столичной филиальной сети на специализированные подразделения, ориентированные на розничный и корпоративный сегменты.

По состоянию на 31.12.2023г. численность персонала составила 913 сотрудников.

Соответствие требованиям ЦБ РА

В Банке действует Дирекция по комплаенсу, основной целью которой является содействие руководству в вопросе обеспечения соответствия деятельности Банка требованиям законодательства РА, подзаконным нормативным правовым актам и внутренним правовым актам Банка. С этой целью на ежедневной основе проводится анализ действующих законодательных актов, осуществляется последовательный контроль за нормативно-правовым регулированием и внесением изменений во внутренние правовые акты Банка. Со стороны работников Дирекции осуществляется мониторинг за работой филиалов как посредством видеоконтроля, так и выездных проверок. В фокусе внимания Дирекции по комплаенсу также организация тематических семинаров для персонала (законодательные изменения, по вопросам в области противодействия отмыванию денег и финансированию терроризма, соответствие требованиям FATCA и др.).

Стратегические приоритеты на 2024г.

Мы признательны всем Вам за достигнутый прогресс и полны решимости справляться с поставленными задачами и достигать запланированных результатов. В этом году Банк будет фокусироваться на следующие стратегические приоритеты с постановкой конкретных измеримых целей:

- ✓ увеличение доли Банка на рынке и рост клиентской базы за счет развития клиентоцентричного подхода, пенетрации продаж, интеграции современных технологий и обеспечения удобных цифровых каналов,
- ✓ разработка новых источников дохода - инструментов транзакционного бизнеса, расширение брокерского бизнеса на новые рынки,
- ✓ участие в глобальной миссии по защите окружающей среды, финансирование экологических проектов и инициатив, выпуск зеленых облигаций, планомерное развитие всех трех направлений ESG - экология, социальная политика и корпоративное управление.

В рамках выбранной стратегии Банк поставил перед собой задачу добиться в 2024 году показателя чистой прибыли в 11.8 млрд драм, удвоив финансовый результат прошедшего года.

В завершение нашей встречи от имени Правления Банка выражаю благодарность нашим акционерам за их неизменную поддержку и доверие, признательность нашим клиентам и партнерам - за их выбор Юнибанка в качестве надежного финансового союзника, команде Юнибанка – за профессионализм и неустанный труд.

Я убежден, что благодаря совместным усилиям Юнибанк продолжит свой уверенный путь к новым высотам и успеху.

Месроп Акопян
Председатель Правления
19.04.2024г.